

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Բարձր պայմանավորվող կողմերը,

*հաշվի առնելով*, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը և 1948թ. դեկտեմբերի 10-ին Գլխավոր ասամբլեայի հաստատած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հռչակել են այն սկզբունքը, թե բոլոր մարդիկ անխտորի օգտվում են հիմնարար իրավունքներից ու ազատություններից.

*հաշվի առնելով*, որ Միավորված ազգերի կազմակերպությունը զանազան առիթներով իր խորը մտահոգությունն է արտահայտել փախստականների նկատմամբ և ջանացել նրանց համար ապահովել այդ հիմնարար իրավունքների ու ազատությունների հնարավորինս լայն իրականացումը,

*հաշվի առնելով*, որ ցանկալի է վերանայել ու ամրապնդել փախստականների կարգավիճակի վերաբերյալ միջազգային նախկին համաձայնագիրը և նման փաստաթղթերի շրջանակն ու դրանցով տրամադրվող պաշտպանությունն ընդլայնել նոր համաձայնագրով,

*հաշվի առնելով*, որ ապաստանի տրամադրումը կարող է անհարկի ծանր բեռ լինել որոշ երկրների համար և որ, հետևաբար, հիմնախնդրի բավարար լուծումը, որի միջազգային շրջանակներն ու բնույթը ճանաչել է Միավորված ազգերի կազմակերպությունը, չի կարող ձեռք բերվել առանց միջազգային համագործակցության,

արտահայտելով ցանկություն, որ բոլոր պետությունները, ճանաչելով փախստականների հիմնախնդրի սոցիալական ու մարդասիրական բնույթը, իրեց հնարավորության շրջանակներում ամեն ինչ՝ կանխելու այս հիմնախնդրի վերածումը պետությունների միջև լարվածության պատճառի, նշելով որ Միավորված ազգերի հանձնակատարը կոչված է վերահսկելու փախստականների պաշտպանության նախատեսող միջազգային կոնվենցիաները և ընդունելով, որ այս խնդրի լուծման համար կիրառվող միջոցառումների արդյունավետ համակարգումը կախված է պետությունների ու Գերագույն հանձնակատարի համագործակցությունից.

Համաձայնել են ներքոհիշյալի շուրջ.

### ԳԼՈՒԽ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*Հոդված 1. «Փախստական» հասկացության սահմանումը*

A. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «փախստական» հասկացությունը կիրառվում է ցանկացած անձի նկատմամբ, ով.

1. Փախստական է համարվել ըստ 1926թ. մայիսի 12-ի և 1928թ. հունիսի 30-ի համաձայնագրերի կամ ըստ 1933թ. հոկտեմբերի 28-ի և 1938թ. փետրվարի 10-ի կոնվենցիաների, 1939թ. սեպտեմբերի 14-ի արձանագրության կամ Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության կանոնադրության:

Փախստական համարվելու իրաունքը մերժելու մասին Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության կողմից իր գործունեության ընթացքում կայացրած որոշումները չեն խոչընդոտում այն անձանց փախստականի կարգավիճակ տրամադրելուն, ովքեր բավարարում են այս բաժնի 2-րդ կետի պայմանները.

2. մինչև 1951թ. հունվարի 1ճը տեղի ունեցած իրադարձությունների և ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի հարելու պատճառով հետպնդվելու հիմնավորված երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ, նման երկյուղի պատճառով, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով չունենալով քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, անկարող է կամ, նման երկյուղի պատճառով, չի ցանկանում վերադառնալ այնտեղ:

Այն դեպքում, երբ անձն ունի մեկից ավելի քաղաքացիություն, «իր քաղաքացիության երկիր» արտահայտությունը նշանակում է այդ երկրներից յուրքանջյուրը, որի քաղաքացին է նա, և այդ անձը չի համարվում իր քաղաքացիության երկրի պաշտպանությունը կորցրած, եթե, առանց հիմնաված երկյուղի որևէ հիմնավոր պատճառի, չի ընդունել այն երկրներից մեկի պաշտպանությունը, որի քաղաքացին է ինքը:

B. 1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար A բաժնի 1-ին հոդված «մինչև 1951թ. հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձություններ» բառերը նշանակում են.

- a) Եվրոպայի մինչև 1951թ. հունվարի 1-ը տեղի ունեցած «իրադարձություններ», կամ
- b) «Եվրոպայում կամ այլուր մինչև 1951թ. հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձություններ», և պայմանավորվող յուրաքանչյուր պետություն ստորագրման, վավերացման կամ միանալու պահին հայտարարություն է կատարում, նշելով, թե ինքն այդ իմաստներից որն է կիրառում սույն Կոնվենցիայով իր պարտավորությունների նպատակի համար:

2. Պայմանավորվող ցանկացած պետություն, որն ընդունել է (a) տարբերակը, կող ցանկացած ժամանակ ընդյալնել իր պարտավորությունները՝ (b) տարբերակի ընդունումով՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով:

C. Սույն Կոնվենցիայի դրույթները դադարում են կիրառվել A բաժնի հասկացություններին համապատասխանող ցանկացած անձի նկատմամբ, եթե նա.

1. կամավոր կերպով կրկին օգտվել է իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ
2. կորցրած լինելով իր քաղաքացիությունը, կամավոր կերպով կրկին ձեռք է բերել, այն կամ
3. ձեռք է բերել նոր քաղաքացիություն և օգտվում է իր նոր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ
4. կամավոր կերպով վերահաստատվել է այն երկրում, որը լքել էր կամ որից դուրս գտնվում էր հետապնդման երկյուղի պատճառով, կամ
5. այն չի կարող շարունակել հրաժարվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, որովհետև այն հանգամանքները, որոնց կապակցությամբ նա ճանաչվել էր փախստական, դադարել են գոյություն ունենալ, պայմանով, որ այս կետը չի կիրառվում սույն հոդվածի A (1) բաժնի համապատասխանող փախստականի նկատմամբ, որն ի վիճակի է վկայակոչելու նախկին հետապնդումից բխող բավարար պատճառներ՝ հրաժարվելու իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից,
6. լինելով քաղաքացիություն չունեցող անձ՝ ի վիճակի է վերադառնալ իր նախկին մշտական բնակության երկիրը, քանի որ այն հանգամանքները, որոնց կապակցությամբ նա ճանաչվել է փախստական, դադարել են գոյություն ունենալ, պայմանով, որ այս կետը չի կիրառվում սույն հոդվածի A (1) բաժնի համապատասխանող փախստականի նկատմամբ, որն ի վիճակի է վկայակոչելու նախկին հետապնդումից բխող բավարար պատճառներ՝ հրաժարվելու իր մշտական բնակության երկրի պաշտպանությունից:

D. Սույն Կոնվենցիան չի կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր ներկայումս պաշտպանություն կամ օգնություն են ստանում Միավորված ազգերի կազմակերպության մարմիններից կամ հաստատություններից, բացի Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարից:

Եթե նման պատշտպանությունն ու օգնությունը որևէ պատճառով դադարեցվել են առանց այդ անձանց կարգավիճակի հստակ կարգավորման ըստ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլայի ընդունած համապատասխան որոշումների, այս անձինք ipso facto օժտվում են սույն Կոնվենցիայի բխող իրավունքներով:

E. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն կիրառվում այն աձի նկատմամբ, որն այն երկրի իրավասու մարմինների կողմից, որտեղ նա ունեցել է բնակության վայր, ճանաչվել է այդ երկրի քաղաքացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտականություններ ունեցող:

F. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն կիրառում այն անձի նկատմամբ, որի վերաբերյալ լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա.

- a) կատարել է հանցագործություն ընդդեմ խաղաղության, պատերազմական հանցագործություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ինչպես դրանք սահմանված են նման հանցագործությունների կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված միջազգային փաստաթղթերում,
- b) կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հացագործություն ապաստան տված երկրից դուրս՝ նախքան որպես փախստական այդ երկիր ընդունելը,
- c) մեղավոր է ճանաչվել Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքների հակասող արարքներ կատարելու մեջ:

*Հոդված 2. Ընդհանուր պարտավորությունները.*

Յուրաքանչյուր փախստական իրեն ապաստան տված երկրի հանդեպ ունի պարտականություններ, որոնք, մասնավորապես, պահանջում են, որ նա ենթարկվի այդ երկրի օրենքներին ու կանոնակարգերին, ինչպես նաև հասարակական կարգի պահպանմանն ուղղված միջոցառումներին:

*Հոդված 3. Խտրականության անթույլատրելիությունը*

Պայմանավորվող պետություններ սույն Կոնվենցիայի դրույթները փախստականների նկատմամբ կիրառում են՝ առանց ռասայի, կրոնի կամ ծագման ըի հիմքով խտրականության:

*Հոդված 4. Կրոնական համոզմունք*

Պայմանավորվող պետություններն իօրենց տարածքում զտնվող փախստականներին սեփական կրոնն ազատորեն դավանելու և սեփական երեխաների կրոնական ազատ դաստիարակության հարցում ցուցաբերում են առնվազն նույնքան բարեհաճ վերաբերմունք, որքան իրենց քաղաքացիներին:

*Հոդված 5. Սույն Կոնվենցիայից դուրս տրամադրվող իրավունքները*

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի խոչընդոտում այն իրավունքներին և արտոնություններին, որոնք պայմանավորվող պետությունը փախստականներին տրամադրում է սույն Կոնվենցիայից դուրս:

*Հոդված 6. «Միևնույն հանգամանքներում» հասկացությունը*

Սույն Կոնվենցիայի նպատակի համար «միևնույն հանգամանքներում» հասկացությունը նշանակում է, որ ցանկացած պահանջ/ներառյալ ժամանակավոր բնակությանը կամ բնակության տևողությանը կամ պայմաններին վերաբերող պահանջները/, որին տվյալ անկիատը խնդրո առարկա իրավունքից օգտվելու համար պետք է բավարարեր փախստական չլինելու դեպքում, պետք է բավարարվի նրա կողմից, բացառությամբ այն պահանջների, որոնք իրենց բնույթով չեն կարող բավարարվել փախստականի կողմից:

*Հոդված 7. Ազատունը փոխադարձության սկզբունքից*

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Կոնվենցիան բովանդակում է ավելի բարենպաստ դրույթներ, պայմանավորվող պետությունը փախստականներին հատկացնում է նույն վերաբերմունքը, ինչ օտարերկրացիներին:
2. Երեք տարվա բնակությունից հետո բոլոր փախստականներն ազատվում են օրենսդրորեն սահմանված փոպադարձության պահանջից պայմանավորվող պետությունների տարածքում:
3. Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն շարունակում է փախստականներին տրամադրել նույն իրավունքներն ու արտոնությունները, որոնցով նրանք արդեն օժտված էին, փոխադարձության բացակայության դեպքում, սույն կոնվենցիայի՝ այդ պետության համար ուժի մեջ մտնելու օրը:
4. Պայմանավորվող պետությունները բարեհաճորեն են վերաբերվում փախստականներին, փոխադարձության բացակայությամբ, բացի 2-րդ և 3-րդ կետերով տրամադրվող իրավունքներից ու արտոնություններից, այլ իօրավունքներ ու արտոնություններ տրամադրելու և փոխադարձությունից ազատումն այն փախստականների վրա տարածելու հնարավորությունը, որոնք չեն բավարարում 2-րդ և 3-րդ կետերում նշված պայմանները:
5. 2 և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են ինչպես սույն Կոնվենցիայի 13, 18, 19, 21 և 22-րդ հոդվածներում նշված իրավունքների ու արտոնությունների, այնպես էլ այն իրավունքների ու արտոնությունների նկատմամբ, որոնք սույն Կոնվենցիայով նախատեսված չեն:

*Հոդված 8. Ազատունը բացառիկ միջոցառումներից*

Այն բացառիկ միջոցառումները, որոնք կարող են կիրառվել ընդդեմ օտար պետության քաղաքացիների անձի, սեփականության կամ շահերի, Պայմանավորվող պետությունները չեն կիրառվում այն փախստականի նկատմամբ, որը ձևականորեն տվյալ պետության քաղաքացի է՝ ելնելով զուտ քաղաքացիությունից: Պայմանավորվող պետությունները, որոնց օրենսդրությունը թույլ չի տալիս սույն հոդվածում արտահայտված ընդհանուր սկզբունքի կիրառումը, համապատասխան դեպքերում նախատեսում են ազատում ի շահ նման փախստականների:

*Հոդված 9. Ժամանակավոր միջոցառումները*

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի խոչընդոտում Պայմանավորվող պետությանը՝ պատերազմի ժամանակ կամ այլ արտակարգ ու բացառիկ հանգամանքներում որոշակի անձի նկատմամբ ձեռնարկելու ժամանակավոր միջոցառումները, որոնք նա էական է համարում ազգային անվտանգության համար, քանի դեռ տվյալ պետությունը չի որոշել, որ հիշյալ անձն իսկապես փախստական է, և նրա դեպքում նման միջոցառումների շարունակականությունն անհրաժեշտ է ի շահ ազգային անվտանգության:

*Հոդված 10. Բնակության անընդհատությունը*

1. Եթե փախստականը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ բռնի տեղահանվել ու տեղափոխվել է պայմանավորվող պետության տարածք և բնակվում է այնտեղ, ապա նման ստիպողական բնակեցման ժամանակահատվածը համարվում է օրինական բնակություն տվյալ տարածքում:
2. Եթե փախստականը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ բռնի կերպով տեղահանվել է պայմանավորվող պետության տարածքից և, նախքան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, վերադարձել է այնտեղ՝ բնակություն հաստատելու նպատակով, ապա նման ստիպողական տեղահանմանը նախորդած և հաջորդած բնակության ժամանակահատվածները համարվում են մեկ անընդհատ ժամանակահատված ցանկացած նպատակով, որի համար անընդհատ բնակություն է պահանջվում:

*Հոդված 11. Փախստական նավաստիները*

Պայմանավորվող կողմից դրոշի ներքո նավարկող նավի անձնակազմում կանոնավոր ծառայող փախստականների դեպքում այդ պետությունը բարեհաճ է վերաբերվում իր տարածքում նրանց գտնվելուն և ճամփորդական փաստաթղթերի տրամադրմանը կամ իր տարածք նրանց ժամանակավոր ընդունմանը՝ մասնավորապես, նրանց բնակեցումը որևէ այլ երկիր հեշտացնելու նպատակով:

**ԳԼՈՒԽ II**

**ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

*Հոդված 12. Անձնական կարգավիճակը*

1. Փախստականի անձնաան կարգավիճակը որոշվում է նրա մշտական բնակության երկրի օրենսդրությամբ կամ, եթե նա չունի մշտական բնակության վայր, բնակության երկրի օրենսդրությամբ:
2. Փախստականի կողմից նախկինում ձեռք բերված և անձնական կարգավիճակից կախված իրավունքները, մասնավորապես, ամուսնության հետ կապված իրավունքները, հարգվում են Պայմանավորվող պետության կողմից, անհրաժեշտության դեպքում, տվյալ պետության օրենսդրությամբ պահանջվող ձևականություններին համապատասխան, պայմանով, որ խնդրո առարկա իրավունքն այդ պետության օրենսդրությամբ կճանաչվեր, եթե անձը փախստական չլիներ:

*Հոդված 13. Շարժական և անշարժ գույքը*

Պայմանավորվող պետությունները շարժական և անշարժ գույքի և դրան առնչվող այլ իրավունքների ձեռքբերման, ինչպես նաև կապված այլ պայմանագրերի կապակցությամբ փախստականին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

*Հոդված 14. Հեղինակային իրավունքները և արդյունաբերական սեփականությունը*

Արդյունաբերական սեփականության, ինչպիսիք են՝ գյուղատերը, նախագծերն ու մոդելները, ապրանքանշանները, ֆիրմային անվանումները, ինչպես նաև գրական, արվեստի և գիտական ստեղծագործությունների նկատմամբ իրավունքների պաշտպանության կապակցությամբ փախստականին իր սովորական բնակության երկրում տրամադրվում է նույն պաշտպանությունը, ինչ այդ երկրի քաղաքացիներին: Ցանկացած այլ պայմանավորվող պետության տարածքում նրան տրամադրվում է նույն պաշտպանությունը, ինչ այդ տարածքում այն երկրի քաղաքացիներին, որիտեղ նա ունի իր սովորական բնակության վայրը:

*Հոդված 15. Միավորումներ կազմելու իրավունքը*

Ոչ քաղաքական և շահույթ չհետապնդող միությունների և արհմիությունների կապակցությամբ պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինականորեն գտնվող փախստականներին հատկացում են ամենաբարեհաճ վերաբերմունքը, որը նույն հանգամանքներում հատկացվում է օտարերկրացիներին:

*Հոդված 16. Դատարան դիմելու իրավունքը*

1. Յուրաքանչյուր փախստական իրավունք ունի ազատորեն դիմելու բոլոր պայմանավորվող պետությունների տարածքում գտնվող դատարաններին:
2. Այն պայմանավորվող պետությունում, որտեղ փախստականն ունի իր սովորական բնակության վայրը, դատարան դիմելու հետ կապված հարցերում նա օգտվում է նույն վերաբերմունքից, ինչ քաղաքացիները, ներառյալ իրավաբանական օգնությունն ու ազատումը *cautio iudicatum solvi*-ից:
3. 2-րդ կետում նշված հարցերով փախստականն իր սովորական բնակության երկրից դուրս օգտվում է իր սովորական բնակության երկրի քաղաքացիներին հատկացվող վերաբերմունքից:

### ԳԼՈՒԽ III ՇԱՐՈՒՅԹ ԱՊԱՐՈՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

#### *Հոդված 17. Վարձով աշխատանքը*

1. Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով գտնվող փախստականներին, աշխատավարձով վարձատրվող աշխատանքով զբաղվելու իրավունքի կապակցությամբ, հատկացնում են առավելագույնս բարեհաճ վերաբերմունք, որը նույն հանգամանքներում հատկացվում է օտարերկրացիներին:
2. Ամեն դեպքում, ներպետական աշխատուժի շուկայի պաշտպանության նպատակով օտարերկրացիների կամ օտարերկրացիների զբաղվածության նկատմամբ կիրառվող սահմանափակիչ միջոցառումները չեն կիրառվում այն փախստականի նկատմամբ, ով արդեն ազատված է եղել դրանցից տվյալ պայմանավորվող պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրը կամ, եթե նա բավարարում է հետևյալ պայմաններից մեկը.
  - a) երեք տարի բնակվել է այդ երկրում.
  - b) ունի բնակության երկրի քաղաքացիություն ունեցող ամուսին: Փախստականը չի կարող վկայակոչել այս դրույթի արհտոնությունը, եթե լքել է ամուսնուն,
  - c) ունի բնակության երկրի քաղաքացիություն ունեցող մեկ կամ ավելի երեխաներ:
3. Պայմանավորվող պետությունները բարեհաճ են վերաբերվում աշխատավարձով վարձատրվող աշխատանքի կապակցությամբ բոլոր փախստականների իրավունքները քաղաքացիների իրավունքներին հավասարեցնելուն, մասնավորապես, այն փախստականների, ովքեր իրենց տարածք մուտք են գործել աշխատուժի հավաքագրման ծրագրերի կամ ներգաղթի ծրագրերի համաձայն:

#### *Հոդված 18. Անհատ ձեռնարկությունը*

Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականին իր սեփական միջոցներով գյուղառնտեսությամբ, ադրյունաբերությամբ, արհեստներով ու առևտրով զբաղվելու և առևտրային ու արդյունաբերական ընկերություններ հիմնելու իրավունքի կապակցությամբ հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

#### *Հոդված 19. Ազատ մասնագիտությունները*

1. Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն իր տարածքում օրինական կարգով բնակվող այն փախստականներին, ովքեր ունեն այդ պետության իրավասու իշխանությունների կողմից ճանաչված դիպլոմներ, և ովքեր ցանկանում են զբաղվել ազատ մասնագիտությամբ, հատկացնում է հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:
2. Պայմանավորվող պետություններն իրենց օրենքներին և սահմանադրություններին համապատասխան գործադրում են իրենց լավագույն ջանքերը՝ ապահովելու նման փախստականների բնակեցումը, բուն տարածքից բացի, այլ տարածքներում, որոնց միջազգային հարաբերությունների համար իրենք պատասխանատու են:

### ԳԼՈՒԽ IV ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՐՈՎՈՒԹՅՈՒՆ

*Հոդված 20. Չափաբաժինները*

Այնտեղ, որտեղ գոյություն ունի չափաբաժինների համակարգ, որը կիրառվում է ողջ բնակչության նկատմամբ, և կարգավորվում սակավաքանակ պարենի բաշխումը, փախստականներին հատկացվում է նույն վերաբերմունքը, ինչ քաղաքացիներին:

*Հոդված 21. Բնակարանով ապահովումը*

Բնակարանով ապահովելու կապակցությամբ պայմանավորվող պետությունները, այնքանով, որքանով հարցը կարգավորվում է օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով կամ խայնանավորվող պետությունների իրավասու իշխանությունների վերահսկողության առարկա է, իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականներին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան ինչ նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

*Հոդված 22. Հանրային կրթությունը*

1. Տարրական կրթության կախակցությամբ պայմանավորվող պետությունները փախստականներին հատկացնում են նույն վերաբերմունքը, ինչ իրենց քաղաքացիներին:
2. Պայմանավորվող պետությունները տարրական կրթությունից տարբեր կրթության և, մասնավորապես, ուսուցման մատչելիության, օտարերկրյա դպրոցական վկայագրերի, դիպլոմների ու գիտական աստիճանների ճանաչման, տուրքերից ու վճարումներից ազատման և կրթաթոշակների շնորհման կապակցությամբ փախստականներին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան յուն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

*Հոդված 23. Հանրային օժանդակությունը*

Պայմանավորվող պետությունները հանրային օժանդակության և օգնության կապակցությամբ իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականներին հատկացնում են նույն վերաբերմունքը, ինչ իրենց քաղաքացիներին:

*Հոդված 24. Աշխատանքային օրենդորությունը և սոցիալական ապահովությունը*

1. Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականներին հետևյալ հարցերի կախակցությամբ հատկացնում են նույն վերաբերմունքը, ինչ իրենց քաղաքացիներին.
  - (a) Այնքանով, որքանով նման հարցերը կարգավորվում են օրենքներով կամ ենթաօրենսդրաան ակտերով կամ վարչական իշխանությունների վերահսկողության առարկա են վարձատրության, ներառյալ վարձատրության մաս կազմող ընտանեկան նպաստները, աշխատաժամերի, արտաժամյա աշխատանքի, վարձատրվող արձակուրդի, տնայնագործ աշխատանքի սահմանափակումների, աշխատելու, աշակերտելու կամ վերախառնաստման նվազագույն տարիքի, կանանց ու պատանեկան տարիքի անձանց աշխատանքի և կոլեկտիվ խայնանագրերի արտոնությունների կախակցությամբ:
  - (b) Սոցիալական ապահովվածության կապակցությամբ /աշխատանքային ստացած վնասվածք, մասնագիտական հիվանդություններ, մայրություն, հիվանդություն, անաշխատունակություն, ծերություն, մահ, գործազրկություն, ընտանեկան պարտավորություններ և այլ դեպքեր, որոնք ներպետական օրենքների կամ ենթապրենսդրական ակտերի համաձայն նախատեսվում են սոցիալական ապահովության ծրագրով/ հետևյալ սահմանափակումներով.
    - (i) կարող է գործել ձեռք բերված իրավունքների և ձեռքբերման գործընթացում գտնվող իրավունքների պահպանման համապատասխան կարգ.
    - (ii) բնակության երկրի ներպետական օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով կարող է սահմանվել հատուկ կարգ այն նպաստների կամ նպաստների մի մասի առնչությամբ, որոնք ամբողջապես վճարվում են

պետական հիմնադրամների հաշվին, ինչպես նաև այն անձանց վճարվող նպաստների առնչությամբ, ովքեր չեն կատարում բնականոն կարգով կենսաթոշակ ստանալու համար նախատեսված վճարումների պայմանները:

2. Աշխատանքային վնասվածքի կամ մասնագիտական հիվանդության հետևանքով փախստականի մահվան դեպքում տրվող փոխհատուցման իրավունքի վրա չի ազդում այն հանգամանքը, որ փոխհատուցում ստացողի մշտական բնակության վայրը գտնվում է պայանավորվող պետության տարածքից դուրս:
3. Պայանավորվող պետությունները փախստականների վրա տարածում են իրենց միջև կնքված կամ կնքվելիք պայանագրերով նախատեսվող արտոնությունները, որոնք վերաբերում են սոցիալական ապահովության ոլորտում ձեռք բերված իրավունքների և ձեռքբերման գործընթացում գտնվող իրավունքների պահպանմանը՝ նույնպիսի պայաններով, ինչ կիրառվում են նշված պայանագրերն ստորագրող պետությունների քաղաքացիների նկատմամբ:
4. Պայանավորվող պետությունները պետք է բարեհաճ վերաբերվեն պայանավորվող պետությունների և պայանագրին չմասնակցող պետությունների միջև երբևէ կնքվող նմանատիպ պայանագրերով նախատեսված նպաստների փախստականների վրա հմարավորինս տարածելուն:

## ԳԼՈՒԽ V ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### *Հոդված 25. Վարչական օժանդակությունը*

1. Եթե փախստականի կողմից որևէ իրավունքից օգտվելը, որպես կանոն, պահանջում է օտարերկրյա պետության իշխանությունների աջակցություն, որին նա դիմել չի կարող, ապա պայմանավորվող պետությունը, որի տարածքում նա բնակվում է, հնարավորություն է տալիս, որպեսզի այդ աջակցությունը տրամադրվի իր իսկ իշխանությունների կամ միջազգային մարմնի կողմից:
2. 1-ին կետում նշված մարմինը կամ իշխանությունները փախստականներին տրամադրում են այն փաստաթղթերը կամ վկայագրերը, կամ իօրենց վերահսկողությամբ ապահովում են դրանց տրամադրումը, որոնք, որպես կանոն, կտրամադրվեն օտարերկրացիներին իրենց ներպետական իշխանությունների կողմից կամ միջոցով:
3. Նման ձևով տրամադրված փաստաթղթերը կամ վկայագրերը ծառայում են որպես օտարերկրացիներին իրենց ներպետական իշխանությունների կողմից տրամադրված պաշտոնական փաստաթղթեր, և, հակառակի ապացույցների բացակայության դեպքում, պետք է արժանանա վստահության:
4. Այնպիսի բացառիկ վերաբերմունքից բացի, որը կարող է հատկացվել կարիքավոր անձանց, վերոհիշյալ ծառայությունների դիմաց կարող են գանձվել տուրքեր, բայց դրանք պետք է լինեն չափավոր և համապատասխանեն այն տուրքերին, որոնք նման ծառայությունների դիմաց գանձվում են տվյալ երկրի քաղաքացիներից:
5. Սույն հոդվածի դրույթները չեն խոչընդոտում 27 և 28-օրոք հոդվածների դրույթներին:

### *Հոդված 26. Տեղաշարժի ազատությունը*

Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն իր տարածքում օրինական կարգով բնակվող փախստականներին տրամադրում է իրենց բնակության վայրի ընտրության և իր տարածքում ազատորեն տեղաշարժվելու իրավունք՝ նույն հանգամանքներում կիրառվող բոլոր կանոնների պահպանմամբ:

### *Հոդված 27. Ինքնության վկայականները*

Պայմանավորվող պետություններն ինքնության վկայականներ են տալիս իրենց տարածքում գտնվող ցանկացած փախստականի, որը չունի վավերական ճանփորդական փաստաթուղթ:

### *Հոդված 28. Ճանփորդական փաստաթղթերը*

1. Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակավող փախստականներին տալիս են ճանփորդական փաստաթղթեր՝ իրենց տարածքից դուրս ճանփորդելու նպատակով, եթե ազգային անվտանգությունից և հասարակական կարգի պաշտպանությունից բխող հիմնավոր պատճառներն այն բան չեն պահանջում, և նշված փաստաթղթերի առնչությամբ կիրառվում են սույն Կոնվենցիայի ցանկի դրույթները: Պայմանավորվող պետությունները կարող են նման ճանփորդական փաստաթուղթ տալ իրենց տարածքում գտնվող ցանկացած այլ փախստականի, մասնավորապես, նրանց բարեհաճ են վերաբերվում իրենց տարածքում գտնվող այն փախստականներին նման ճանփորդական փաստաթուղթ տալուն, ովքեր ի վիճակի չեն ճանփորդական փաստաթուղթ ստանալ իրենց օրինական բնակության երկրում:
2. Նախկին միջազգային պայմանագրերին համապատասխան դրանց մասնակիցների կողմից փախստականներին տրված ճանփորդական փաստաթղթերը պայմանավորվող պետությունների կողմից ճանաչվում և

դիտվում են որպես այնպիսին, ինչպես եթե դրանք տրված լինեին սույն հոդվածին համապատասխան:

*Հոդված 29. Պետական գանձումները*

1. Պայմանավորվող պետությունները փախստականներից չեն գանձում մաքսեր, վճարներ կամ հարկեր, որոնք այլ կամ ավելի բարձր են, քան նրանք, որ միևնույն հանգամանքներում գանձվում են կամ կարող են գանձվել իրենց քաղաքացիներից:
2. Նախորդ կետում ոչինչ չի խոչընդոտում փախստականների նկատմամբ այն պրենքների ու կանոնակրգերի կիրառմանը, ըստ որոնց գանձումներ են կատարվում օտարերկրացիներին վարչական փաստաթղթեր, ներառյալ՝ ինքնության վկայականներ տալու համար:

*Հոդված 30. Գույքի տեղափոխումը*

1. Պայմանավորվող պետությունը, իր օրենքներին և ենթօրենսդրական ակտերին համապատասխան, փախստականներին թույլատրում է իր տարածք բերած գույքը տեղափոխել մեկ այլ երկիր, ուր նրանք ընդունվել են բնակության նպատակով:
2. Պայմանավորվող պետությունները բարեհաճ են վերաբերվում փախստականների այն գույքի, որտեղ էլ այն գտնվելիս լինի, տեղափոխման թույլատվության միջնորդություններին, որը նրանց անհրաժեշտ է այլ երկրում, ուր նրանց մուտքը թույլատրվել է բնակություն հաստատելու համար:

*Հոդված 31. Ապաստան տված երկրում անօրինական կարգով գտնվող փախստականները*

1. Պայմանավորվող պետությունները պատժամիջոցներ չեն կիրառում այն փախստականների ապօրինի մուտքի կամ ներկայության կապակցությամբ, ովքեր ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր 1-ին հոդվածի իմաստով, մուտք են գործում իրենց տարածք կամ գտնվում են այնտեղ առանց թույլատրության, պայմանով, որ նրանք անձամբ, առանձ ձգձգման, ներկայանան իշխանություններին և մատնանշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառը:
2. Պայմանավորվող պետությունները նման փախստականների տեղաշարժի նկատմամբ չեն կիրառում այլ սահմանափակումներ, քան նրանք, որ անհրաժեշտ են, և նման սահմանափակումները կիրառվում են միայն մինչև տվյալ երկրում նրանց կարգավիճակի կարգավորումը կամ մինչև նրանք մեկ այլ երկիր մուտք գործելու թույլտվություն ստանան: Պայմանավորվող պետությունները նման փախստականներին տալիս են բավարար ժամանակամիջոց և անհրաժեշտ հնարավորություններ՝ մեկ այլ երկիր մուտք գործելու թույլտվություն ձեռք բերելու համար:

*Հոդված 32. Վտարումը*

1. Պայմանավորվող պետությունները չեն վտարում իրենց տարածքում օրինական կարգով գտնվող փախստականին, բացի ազգային անվտանգությամբ կամ հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերից:
2. Նման փախստականի վտարումը կատարվում է միայն օրենքի պատշաճ կարգով ընդունված որոշման հիման վրա: Բացի այն դեպքերից, երբ ազգային անվտանգության անհաղթահարելի հիմնավորումներն այլ բան են պահանջում, փախստականին թույլատրվում է ի արդարացումն իրենց ներկայցնել ապացույց և բողոքարկել իրավասու իշխանությանը կամ իրավասու իշխանության կողմից հատուկ նշանակված անձին կամ անձանց և այդ նպատակով ներկայցվել նրանց առջև:
3. Պայմանավորվող պետությունները նման փախստականին բավարար ժամանակ են տալիս՝ այդ ընթացքում ստանալու օրինական կարգով մեկ այլ երկիր մուտք գործելու թույլտվություն: Պայմանավորվող պետություններին

իրեվոնք է վերապահվում այդ ընթացքում կիրառել այնպիսի ներքին միջոցառումներ, որ նրանք անհրաժեշտ կհամարեն:

*Հոդված 3. Վտարման կամ վերադարձման («վերադարձ այն երկիր, որտեղից եկել են») արգելումը*

1. Պայմանավորվող ոչ մի պետություն փախստականին չի վտարում կամ որևէ կերպ վերադարձնում («վերադարձնում այն երկիր, որտեղից եկել է») այն տարածքների սահմանները, որտեղ նա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնար՝ իր ռասայի, կրոնի քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով:
2. Սույն դրույթի արտոնությունը, սակայն. չի կարող վկայակոչվել այն փախստականի կողմից, ով հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում իր գտնված երկրի անվտանգության համար, կամ ով, վերջնական դատավճռով դատապարտված լինելով բացառիկ լուրջ հանցագործության համար՝ վտանգ է ներկայացնում այդ երկրի հասարակության համար:

*Հոդված 34. Հպատակագրումը*

Պայմանավորվող պետությունները հնարավորինս հեշտացնում են փախստականների միաձուլումն ու հպատակագրումը: Նրանք, մասնավորապես, գործադրում են ամեն ջանք, որպեսզի արագացնեն հպատակագրման գործընթացը և հնարավորինս նվազեց նեն դրա հետ կապված զանձումներն ու ծախսերը:

## ԳԼՈՒԽ VI ԳՈՐԾԱԴԻՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*Հոդված 35. Ներպետական իշխանությունների համագործակցությունը*

Միավորված ազգերի կազմակերպության հետ

1. Պայմանավորվող պետությունները պարտավորվում են համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կամ Միավորված ազգերի կազմակերպության որևէ այլ հաստատության հետ, որը կարող է նրան փոխարինել համապատասխան գործառույթների իրականացման գործում, և , մասնավորապես, հեշտացնում են սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա պարտականությունը:
2. Որպեսզի Գերագույն հանձնակատարի գրասենյակին կամ Միավորված ազգերի կազմակերպության՝ առաջինին փոխարինելու ունակ այլ հաստատության հնարավորություն տրվի պատրաստելու Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին ուղղված զեկույցներ, պայմանավորվող պետությունները պարտավորվում են համապատասխանաար նրանց տրամադրել պահանջվող տեղեկատվություն և վիճակագրական տվյալներ, որոնք վերաբերում են.

(a) փախստականների վիճակին.

(b) սույն Կոնվենցիայի կատարմանը. և

(c) փախստականներին առնչվող գործող կամ ընդունցելիք օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին ու հրամանագրերին:

*Հոդված 36. Ներպետական օրենսդրության վերաբերյալ տեղեկատվությունը*

Պայմանավորվող պետությունները Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հաղարդում են այն օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի մասին, որ նրանք կարող են ընդունել սույն Կոնվենցիայի կատարումն ապահովելու համար:

*Հոդված 37. Առնչությունը նախկին կոնվենցիաներին*

Չխոչընդոտելով սույն Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2-րդ կետին՝ սույն Կոնվենցիան իր մասնակիցների համար փոխարինում է 1922թ. հուլիսի 5-ի, 1924թ. մայիսի 31-օ. 1926թ. մայիսի 12-ի, 1928թ. հունիսի 30-ի և 1935թ. հուլիսի 30-ի

Կարգադրություններին, 1933թ. հոկտեմբերի 28-ի և 1938թ. փետրվարի 10-ի կոնվենցիաներին, 1939թ. սեպտեմբերի 14-ի Արձանագրությանը և 1946թ. հոկտեմբերի 15-կ Չամաձայնագրին:

## ԳԼՈՒԽ VII ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### *Հոդված 38. Վեճերի կարգավորումը*

Սույն Կոնվենցիայի մասնակիցների միջև դրա մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող ցանկացած վեճ, որը հնարավոր չէ լուծել այլ միջոցներով, վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով հանձնվում է Արդարադատության միջազգային դատարանին:

### *Հոդված 39. Ստորագրումը, վավերացումը և միանալը*

1. Սույն Կոնվենցիան ստորագման համար բացվում է ժնևում, 1951թ. հուլիսի 28-ին և դրանից հետո ի պահ է հանձնվել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Ստորագրման համար այն բաց է Միացյալ ազգերի կազմակերպության Եվրոպական գրասենյակում, 1951թ. հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 31-ը, և վերաբացվելու է Միացյալ ազգերի կազմակերպության կենտրոնականայանում, 1952թ. սեպտեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 31-ը:
2. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետությունների, ինչպես նաև Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի վերաբերյալ լիազոր ներկայցուցիչների խորրդաժողովին հրավիրված կամ Գլխատր ասամբլեայի կողմից ստորագրման հրավեր ստացած ցանկացած այլ պետության անունից: Այն վավերացվում է, և վավերագրերն ի պահ են հանձնվում Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
3. Սույն կոնվենցիան բաց է սույն հոդվածի 2-րդ կետում նշված պետությունների անունից հիանալու համար 1951թ. հուլիսի 28-իդ: Միանալը կատարվում է միանալու վերաբերյալ փաստաթուղթը Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

### *Հոդված 40. Տարածքային կիրառման դրույթը*

1. Ստորագրման, վավերացման կամ միանալու ժամանակ ցանկացած պետություն կարող է հայտարարել, որ սույն Կոնվենցիան տարածվում է այն բոլոր տաչածքների ,կամ դրանցից ցանկացած վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է: Նման հայտարարությունն ուժի մեջ է մտնում, մերթ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում տվյալ պետության համար:
2. Դրանից հետո ցանկացած ժամանակ նման տարածումը կատարվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին միացնագրված ծանուցման միջոցով և ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալուց հետո ինսուներորդ օրվանից կամ տվյալ պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից, որն ավելի ուշ լինի:
3. Այն տարածքների առնչությամբ, որոնց վրա սույն Կոնվենցիան չի տարածվում ստորագրման, վավերացման կամ միանալու ժամանակ, յուրաքանչյուր պետություն քննության է առնում սույն Կոնվենցիայի կիրառումն այդ տարածքների վրա տարածելու նպատակով անհարժեշտ քայլեր ձեռնարկելու հնարվորությունը, պայմանով, որ դա կատարվի նման տարածքների կառավարությունների համաձայնությամբ, եթե այդ անհրաժեշտ է սահմանդրական պատճառներով:

### *Հոդված 41. Դաշնային դրույթը*

Դաշնային կամ ոչ ունիտար պետության դեպքում գործում են հետևյալ դրույթները.

- (a) սույն Կոնվենցիայի այն հոդվածների առնչությամբ, որոնք ենթակա են դաշնային օրենդիր իշխանության օրենսդրական իրավազորությանը, դաշնային կառավարության պարտավորություններն այս շրջանակներում նույնն են, ինչ դաշնային պետություն չհանդիսացող մասնակիցներինը,
- (b) սույն Կոնվենցիայի այն հոդվածները, որոնք ենթակա են պետության կազմի մեջ մտնող նահանգների, գավառների կամ կանտոնների օրենսդրական իրավազորությանը, որոնք, ըստ դաշնային սահմանադրական համակարգի, պարտավոր չեն կիրառել համապատասխան օրենսդրական միջոցառումներ, դաշնային կառավարությունը նպաստող հանձնարարականի հետ միասին հնարավորինս վաղ ներկայացնում է նահանգների, գավառների կամ կանտոնների համապատասխան իշխանությունների ուշադրությունը,
- (c) սույն Կոնվենցիայի մասնակից դաշնային պետությունը ցանկացած այլ խայնանավորվող պետության՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով փոխանցված խնդրանքով, հաղորդագրություն է տրամադրում սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթի առնչությամբ դաշնության և նրա բաղկացուցիչ միավորների օրենսդրության ու պրակտիկայի վերանբերյալ՝ նշելով, թե ինչ չափով է այդ դրույթն իրագործվել օրենսդրական կամ այլ գործողությունների միջոցով:

*Հոդված 42. Վերապահումները*

1. Ստորագրման, վավերացման կամ միանալու ժամանակ ցանկացած պետություն կարող է վերապահումներ կատարել Կոնվենցիայի հոդվածների վերաբերյալ, բացի 1, 3, 4, 16(1), 33 և 36-46-րդ հոդվածների:
2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն վերապահում կատարած ցանկացած պետություն կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել վերապահումը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:

*Հոդված 43. Ուժի մեջ մտնելը*

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վեցերորդ վավերագրի կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնելու օրվան հաջորդող իննսուներորդ օրը:
2. Վեցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո Կոնվենցիան վավերացրած կամ դրան միցած յուրաքանչյուր պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

*Հոդված 44. Չեղյալ հայտարարումը*

1. Պայմանավորվող ցանկացած պետություն կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:
2. Տվյալ պայմանավորվող պետության համար չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի անց:
3. Ցանկացած պետություն, որը 40-րդ հոդվածի հիման վրա հայտարարություն կամ ծանուցում է արել, դրանից հետո ցանկացած ժամանակ կարող է, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով, հայտարարել, որ Կոնվենցիան դադարում է տարածվել տվյալ տարածքի վրա Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալուց մեկ տարի անց:

*Հոդված 45. Վերանայում*

1. Պայմանավորվող ցանկացած պետություն կարող է, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով, ցանկացած ժամանակ պահանջել սույն Կոնվենցիայի վերանայում:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեան նման պահանջի կապակցությամբ հանձնարարում է ձեռնարկել համապատասխան քայլեր, եթե այդպիսիները կան:

*Հոդված 46. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի ծանուցումները*

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմակերպության բոլոր անդամներին և 39-րդ հոդվածում հիշատակված ոչ անդամ պետությունների տեղեկացնում է.

- (a) 1-ին հոդվածի B մասին համապատասխան հայտարարությունների և ծանուցումների մասին.
- (b) 39-րդ հոդվածին համապատասխան ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,
- (c) 40-րդ հոդվածին համապատասխան հայտարարությունների և ծանուցումների մասին,
- (d) 42-րդ հոդվածին համապատասխան վերապահումների և վերապահումներից հրաժարումների մասին,
- (e) 43-րդ հոդվածին համապատասխան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- (f) 44-րդ հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարման և ծանուցումների մասին,
- (g) 45-րդ հոդվածին համապատասխան վերանայման պահանջների մասին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, իրենց կառավարությունների անունից, ստորագրել են սույն Կոնվենցիան: Կատարված է ժնևում, հազար ինը հարյուր հիսունմեկ թվականի հուլիսի քսանութին, մեկ օրինակով, որի անգլերեն ու ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են և որն ի պահ է մնում Միավորված ազգերի կազմակերպության արխիվում. նրա վավերացված պատճենները հանձնվում են Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներին և 39-րդ հոդվածում նշված ոչանդամ պետություններին:

## ՑԱՆԿ

### *Կետ 1*

- 1. Սույն կոնվենցիայի 28-րդ հոդվածում նշված ճամփորդական փաստաթուղթը նույնանման է կից ներկայացված նմուշին:
- 2. Փաստաթուղթը պատրաստվում է առնվազն երկու լեզվով, որոնցից մեկն անգլերեն է կամ ֆրանսերեն:

### *Կետ 2*

Փաստաթուղթը տվող երկրում ընդունված կանոններով պայմանավորված երեխաները կարող են գրանցվել ծնողի կամ, բացառիկ դեպքերում, մեկ այլ չափահաս փախստականի ճամփորդական փաստաթղթերու,:

### *Կետ 3*

Փաստաթուղթ տալու համար գանձվող տուրքը չպետք է գերազանցի ներպետական անձնագիր տալու համար գանձվող նվազագույն վճարը:

### *Կետ 4*

Բացառությամբ հատուկ կամ արտակարգ դեպքերի, փաստաթուղթը վավերական է հնարավորինս շատ երկրների համար:

### *Կետ 5*

Փաստաթուղթը տվող իշխանության հայեցողությամբ՝ այն վավերական է մեկ կամ երկու տարվա ընթացքում:

### *Կետ 6*

- 1. Փաստաթղթի վերականգնումը կամ վավերականության երկարաձգումը փաստաթուղթը տված իշխանության իօրավասությունն է, քանի դեռ նրա տեղը օրինական բնակություն չի հաստատել մեկ այլ տարածքում և օրինական

կարգով բնակվում է նշված իշխանության տարածքում: Նոր փաստաթուղթ տալը, միևնույն պայմաններով, նախորդ փաստաթուղթը տված իշխանության իրավասությունն է:

2. Դիվանագիտական և հյուպատոսական մարմինները, որոնք հատուկ լիազորված են այդ նպատակով, իրավունք ունեն վեց ամիսը չգերազանցող ժամկետով երկարաձգել իրենց կառավարությունների տված ճամփորդական փաստաթղթերի վավերականությունը:
3. Պայմանավորվող պետությունները բարեհաճ են վերաբերվում այն փախստականների ճամփորդական փաստաթղթերի վերականգնմանը կամ վավերականության երկարաձգմանը կամ նրանց նոր փաստաթղթեր տալուն, ովքեր այլևս օրինական կարգով չեն բնակվում նրանց տարածքում և ի վիճակի չեն ճամփորդական փաստաթուղթ ստանալ իրենց օրինական բնակության երկրից:

#### *Կետ 7*

Պայմանավորվող պետությունները ճանաչում են սույն Կոնվենցիայի 28-րդ հոդվածի դրույթներին համապատասխան տրված ճամփորդական փաստաթղթերի վավերականությունը:

#### *Կետ 8*

Եթե այն երկրի իրավասու իշխանությունները, ուր փախստականը ցանկանում է ուղևորվել, պատրաստ են ընդունելու նրան և եթե պահանջվում է մուտքի արտոնագիր, նրանք մուտքի արտոնագիրն ամրացնում են փախստականին պատկանող փաստաթղթին:

#### *Կետ 9*

1. Պայմանավորվող պետությունները պարտավորվում են տարանցիկ մուտքի արտոնագրեր տալ այն փախստականներին, ովքեր մուտքի արտոնագիր են ստացել վերջնական նշանակման տարածքի համար:
2. Նման մուտքի արտոնագրերը կարող են մերժվել նույն պատճառներով, ինչ պատճառներով կարդարացվեր ցանկացած օտարերկրացու մուտքի արտոնագրի մերժումը:

#### *Կետ 10*

Ելքի, մուտքի կամ տարանցիկ մուտքի արտոնագրերի համար գանձվող տուրքերը չպետք է գերազանցեն օտարերկրյա անձնագրերով մուտքի արտոնագրի համար վճարումների նվազագույն չափը:

#### *Կետ 11*

Երբ փախստականն օրինական կարգով բնակություն հաստատել պայմանավորվող մեկ այլ պետության տարածքում, 28-րդ հոդվածի դրույթներին և պայմաններին համապատասխան նոր փաստաթուղթ տալու պատասխանատվությունը կրում է այդ տարածքի իրավասու իշխանությունը, որին փախստականն իրավունք ունի դիմելու:

#### *Կետ 12*

Նոր փաստաթուղթ տվող իշխանությունը հին փաստաթուղթը հետ է վերցում և վերադարձնում այն տված պետությանը, եթե փաստաթղթում նշված է, որ պետք է վերադարձվի. այլապես, փաստաթուղթը հետ է վերցվում և չեղյալ հայտարարվում:

#### *Կետ 13*

1. Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն պարտավորվում է սույն Կոնվենցիայի 28-րդ հոդվածին համապատասխան տրված ճամփորդական փաստաթղթի տիրոջը դրա վավերականության ընթացքում ցանկացած ժամանակ ընդունելու իր տարածք:
2. Նախորդ ենթակետի դրույթներին համապատասխան, պայմանավորվող պետությունը կարող է պահանջել, որ փաստաթղթի տերը ենթարկվի իր տարածքից ելքի կամ այնտեղ վերադառնալու համար նախատեսված ձևականություններին:

3. Պայմանավորվող պետությունները պահպանում են բաղադրյալ դեպքերում կամ այն դեպքերում, երբ փախստականին թույլատրված է մնալ որոշակի ժամկետով, փաստաթուղթը տալիս այն ժամանակամիջոցը սահմանափակելու իրավունքը, որի ընթացքում փախստականը կարող է վերադառնալ ոչ պակաս, քան մինչև երեք ամիս ժամկետով:

*Կետ 14*

Միայն 13-րդ կետի պայմանների պահպանմամբ՝ սույն ցանկի դրույթները ոչ մի կերպ չեն ազդում պայմանավորվող պետությունների տարածք մուտքի թույլտվության, այնտեղով տարանցիկ անցնելու, այնտեղ բնակվելու և հաստատվելու, այնտեղից դուրս գալու պայմանները կանոնակարգող օրենքների և ենթօրենսդրական ակտերի վրա:

*Կետ 15*

Ո՛չ փաստաթուղթը տալը, ո՛չ դրանում կատարված գրառումները չեն որոշում այն կրողի կարգավիճակը, մասնավորապես, քաղաքացիության առնչությամբ:

*Կետ 16*

Փաստաթուղթ տալը այն կրողին որևէ կերպ չի տալիս տված երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններից պաշտպանություն հայցելու իրավունք և այդ իշխանություններին չի վերապահում պաշտպանության իրավունք:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Ճանփորդական փաստաթղթերի նմուշ.

Փաստաթուղթը պետք լինի գրքույկի ձևով (մոտավորապես 10/15 սմ):

Հանձնարարվում է այն տպագրել այնպես, որպեսզի քիմիական կամ այլ միջոցներով կատարված որևէ ջնջում կամ փոփոխություն հնարավոր լինի հեշտությամբ նկատել, և «1951թ. հուլիսի 28-ի Կոնվենցիա» բառերը, փաստաթուղթը տվող երկրի լեզվով շարունակաբար կրկնվելով, տպագրվում են յուրաքանչյուր էջին:

(Գրքույկի կազմը)

ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ  
(1951թ. հուլիսի 28-ի Կոնվենցիա)

N \_\_\_\_\_  
(1)

Ճանփորդական փաստաթուղթ  
(1951թ. հուլիսի 28-ի Կոնվենցիա)

Սույն փաստաթուղթը վավեր է մինչև \_\_\_\_\_ եթե դրա վավերականությունը չի երկարաձգվում կամ վերականգնվում:

Անուն

Ազգանուն(ներ)

Նրան ուղեկցում է \_\_\_\_\_ եթեխա (երեխաներ):

1. Սույն փաստաթուղթը տրվում է այն կրողին ճանփորդական փաստաթղթով ապահովելու նպատակով միայն և կարող է ծառայել ներպետական անձնագրի փոխարեն: Այն չի խանգարում կրողի քաղաքացիությանը և չի ազդում դրա վրա:
2. Կրողին թույլատրվում է վերադառնալ \_\_\_\_\_ (նշել այն երկիրը, որի իշխանությունները տվել են փաստաթուղթը)-ին կամ մինչև \_\_\_\_\_

Եթե ստրև չի նշվում ավելի ուշ ժամկետ: (Այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կրողն իրավունք ունի վերադառնալ, երեք ամսից պակաս չպետք է լինի):

3. Եթե կրողը բնակություն հաստատի մի երկրում, որն այլ է, քան սույն փաստաթուղթը տված երկիրը, ապա նա պետք է, եթե ցանկանում է կրկին ճամփորդել, նոր փաստաթղթի համար դիմել իր բնակության երկրի իրավասու իշխանություններին: (Նոր փաստաթուղթը տված իշխանությունը հին ճամփորդական փաստաթուղթը հետ է վերցնում և վերադարձնում այն տված իշխանությանը):

(Սույն փաստաթուղթը բաղկացած է \_\_\_\_\_ էջից՝ չհաշված կազմը):  
(2)

Ծննդյան թվականը և վայրը \_\_\_\_\_  
Զբաղմունքը \_\_\_\_\_  
Ներկա բնակությունը \_\_\_\_\_  
Կնոջ օրիորդական անունը և ազգանունը /ները/ \_\_\_\_\_  
Ամուսնու անունը և ազգանունը /ները/ \_\_\_\_\_  
Նկարագրություն \_\_\_\_\_  
Հասակը \_\_\_\_\_  
Մազերը \_\_\_\_\_  
Աչքերի գույնը \_\_\_\_\_  
Քիթը \_\_\_\_\_  
Դեմքի գծագրությունը \_\_\_\_\_  
Կազմվածքը \_\_\_\_\_  
Հատուկ նշաններ \_\_\_\_\_

Անուն Ազգանուն(ներ)	Կրողին ուղեկցող երեխաներ	
	Ծննդյան թվականը	Սեռը և վայրը
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

Ձնջել, ինչն ավելորդ է:

(Սույն փաստաթուղթը բաղկացած է \_\_\_\_\_ էջից՝ չհաշված կազմը):  
(3)

Կրողի լուսանկարը և փաստաթուղթը տվող մարմնի կնիքը

Կրողի մատնահետքերը (եթե պահանջվում է)

Կրողի ստորագրությունը \_\_\_\_\_

(Սույն փաստաթուղթը բաղկացած է \_\_\_\_\_ էջից՝ չհաշված կազմը):  
(4)

1. Սույն փաստաթուղթը վավերական է հետևյալ երկրների համար.

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

2. Այլ փաստաթուղթը կամ փաստաթղթերը, որոնց հիման վրա տրվել է սույն փաստաթուղթը \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Տրված է \_\_\_\_\_-ում

Օրը \_\_\_\_\_

Փաստաթուղթը տվող մարմնի ստորագրությունը և կնիքը

Վճարված է տուրք

(Սույն փաստաթուղթը բաղկացած է \_\_\_\_\_ էջից՝ չհաշված կազմը):

(5)

Վավերականության երկարաձգում կամ վերականգնում  
վճարված է տուրք –ից \_\_\_\_\_  
մինչև \_\_\_\_\_

Կատարված է \_\_\_\_\_-ում Օրը \_\_\_\_\_

Փաստաթղթի վավերականությունը երկարաձգող կամ վերականգնող մարմնի  
ստորագրությունը և կնիքը

Վավերականության երկարաձգվում կամ վերականգնում

վճարված է տուրք –ից \_\_\_\_\_  
մինչև \_\_\_\_\_

Կատարված է \_\_\_\_\_-ում Օրը \_\_\_\_\_

Փաստաթղթի վավերականությունը երկարաձգող կամ վերականգնող մարմնի  
ստորագրությունը և կնիքը

(Սույն փաստաթուղթը բաղկացած է \_\_\_\_\_ էջից՝ չհաշված կազմը:)

(6)

Վավերականության երկարաձգում կամ վերականգնում

վճարված է տուրք –ից \_\_\_\_\_  
մինչև \_\_\_\_\_

Կատարված է \_\_\_\_\_-ում Օրը \_\_\_\_\_

Փաստաթղթի վավերականությունը երկարաձգող կամ վերականգնող մարմնի  
ստորագրությունը և կնիքը

(Սույն փաստաթուղթը բաղկացած է \_\_\_\_\_ էջից՝ չհաշված կազմը:)

(7-32)

Մուտքի արտոնագրեր

Փաստաթուղթը կրողի անունը պետք է կրկնվի մուտքի յուրաքանչյուր  
արտոնագրում:

(Սույն փաստաթուղթը բաղկացած է \_\_\_\_\_ էջից՝ չհաշված կազմը:)

**ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**  
**ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
(4 հոկտեմբերի, 1967թ.)

Սույն Արձանագրությանը մասնակից պետությունները  
*հաշվի առնելով, որ 1951թ. հունիսի 28-ին ժնկում կատարված Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) տարածքվում է միայն այն անձանց վրա, ովքեր փախստական են դարձել մինչև 1951թ. հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով.*  
*հաշվի առնելով, որ Կոնվենցիայի ընդունումից հետո առաջացել փախստականներին առնչվող նոր իրավիճակները և, որ նման փախստականներն այդ իսկ պատճառով կարող են դուրս մնալ Կոնվենցիայի շրջանակներից,*  
*հաշվի առնելով, որ ցանկալի է, որպեսզի Կոնվենցիայի սահմանման համաձայն փախստական համարվող բոլոր անձինք օգտվեն հավասար կարգավիճակից՝ անկախ 1951թ. հունվարի 1-ի վերջնաժամկետից,*  
համաձայնել են հետևյալի շուրջ.

**Յոդված I. Ընդհանուր դրույթներ**

1. Սուկն Արձանագրությանը մասնակից պետությունները պարտավորվում են Կոնվենցիայի 2-34-րդ հոդվածները կիրառել փախստականների նկատմամբ, ինչպես սահմանված է ստորև:
2. Սույն Արձանագրության նպատակների համար «փախստական» հասկացությունը, բացի սույն հոդվածի 3-րդ կետի կիրառության դեպքերից, նշանակում է ցանկացած անձ, ով համապատասխանում է Կոնվենցիայի 1-ին հեղվածի սահմանմանն այնպիսի ձևակերպմամբ, եթե 1 A (2)-րդ հոդվածում բաց թողնված լինեին «մինչև 1951թ. հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով...» և «նման իրադարձությունների հետևանքով» բառերը:
3. Սույն Արձանագրությունը մասնակից պետությունները կիրառում են առանց աշխարհագրական որևէ սահմանափակման, բացառությամբ այն դեպքերի, երբ Կոնվենցիային արդեն մասնակից պետությունների կողմից Կոնվենցիայի 1B (1) (a)-րդ հոդվածի համաձայն կատարած առկա հայտարարությունները, եթե Կոնվենցիայի 1 B (2)-րդ հոդվածին համապատասխան ընդլայնում տեղի չի ունեցել, նույնպես կիրառվում են ըստ սույն Արձանագրության:

**Յոդված II. Ներպետական իշխանությունների համագործակցությունը**

Միավորված ազգերի կազմակերպության հետ

1. Սույն Արձանագրությանը մասնակից պետությունները պարտավորվում են համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կամ Միավորված ազգերի կազմակերպության որևէ այլ հաստատության հետ, որը համապատասխան գործառույթները կատարելու գործում կարող է փոխարինել նրան, և, մասնավորապես, հեշտացնում են սույն Արձանագրության դրույթների կիրառումը վերահսկելու նրա պարտականությունը:
2. Որպեսզի Գերագույն հանձնակատարի գրասենյակին կամ Միավորված ազգերի կազմակերպության՝ նրան փոխարինած՝ որևէ այլ հաստատության հնարավորության տրվի պատրաստելու Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին ուղղված գեկույց, պայմանավորվող պետությունները պարտավորվում են համապատասխանաբար նրանց տրամադրել պահանջվող տեղեկատվություն և վիճակագրական տվյալներ, որոնք վերաբերում են.  
(a) փախստականների վիճակին,  
(b) սույն Արձանագրության կատարմանը

(c) փախստականներին առնչվող գործող կամ ընդունվելիք օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին ու հրամանագրերին:

*Հոդված III. Ներպետական օրենսդրության վերաբերյալ տեղեկատվությունը*

Սույն Արձանագրության մասնակից պետությունները Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հաղորդում են այն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին, որ նրանք կարող են ընդունել սույն Արձանագրության կատարում ապահովելու համար:

*Հոդված IV Վեճերի կարգավորումը*

Սույն Արձանագրության մասնակից պետությունների միջև դրա մեկնաբանմանը կամ կիրառությանը վերաբերող ցանկացած վեճ, որը հնարավոր չէ լուծել այլ միջոցներով, վեճի կողմերից ցանկացածի պահանջով հանձնվում է Միջազգային արդարադատության դատարանին:

*Հոդված V Միանալը*

Սույն Արձանագրությունը միանալու նպատակով բաց է Կոնվենցիայի բոլոր մասնակից պետությունների և Միավորված ազգերի կազմակերպության կամ մասնագիտացված ցանկացած հաստատության ցանկացած այլ անդամ պետության, ինչպես նաև ցանկացած այլ պետության համար, որին կարող է միանալու հրավեր ուղղել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

*Հոդված VI. Ղաշնային դրույթը*

Ղաշնային կամ ոչ-ունիտար պետության դեպքում ործում են հետևյալ դրույթները.

- (a) Կոնվենցիայի այն հոդվածների առնչությամբ, որոնք կիրառվում են սույն Արձանագրության I հոդվածի 1-ին կետին համապատասխան և որոնք ենթակա են ղաշնային օրենսդիր իշխանության օրենսդրական իրավազորությանը, ղաշնային ակռավարության պարտավորություններն այս շրջանակներում նույնն են, ինչ ղաշնային պետություն չհանդիսացող մասնակիցներինը:
- (b) Կոնվենցիայի այն հոդվածները, որոնք կիրառվոև, են սույն Արձանագրության I հոդվածի 1-ին կետին համապատասխան և ենթակա են պետության կազմի մեջ մտնող նահանգների, գավառների կամ կանտոնների օրենսդրական իրավազորությանը, որոնք ըստ ղաշնային սահմանադրական համակարգի, պարտավոր չեն համապատասխան օրենդրական միջոցառումներ կիրառել, ղաշնային կառավարությունը նպաստավոր հանձնարարականի հետ միասին հնարվորինս վաղ ներկայացնում է նահանգների, գավառների կամ կանտոնների համապատասխան իշխանությունների ուշադրությունը:
- (c) Սույն Արձանագրությունը մասնակից ղաշնային պետությունը ցանկացած այլ մասնակից պետության Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով փոխանցված խնդրանքով, հացորդագրություն է տրամադրում ղաշնության և նրա բաղկացուցիչ միավորների՝ սույն Արձանագրության I հոդվածի 1-ին կետին համապատասխան կիրառվող՝ Կոնվենցիայի ցանկացած դրույթի առնչությամբ իր օրենդրության ու պրակտիկայի վերաբերյալ՝ նշելով, թե ինչ չափով է այդ դրույթն իրագործվել օրենսդրական կամ այլ գործողությունների միջոցով:

*Հոդված VII. Վերապահումները և հայտարարությունները*

- 1. Միանալու ժամանակ ցանկացած պետություն կարող է վերապահումներ կատարել սույն Արձանագրության IV հոդվածի և սույն Արձանագրության I հոդվածի համապատասխան կիօրառվող՝ Կոնվենցիայի ցանկացած հոդվածի կապակցությամբ, բացի 1, 3, 4, 16 (1) և 33-րդ հոդվածների, պայմանով, որ Կոնվենցիայի մասնակից պետությունների դեպքում սույն հեղվածի հիման վրա կատարված վերապահումները չեն տարածվում այն փախստականների վրա, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան:

2. Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից նրա 42-րդ հոդվածին համապատասխան կատարված վերապահումները, եթե հեր չեն վերցվել, կիրառվում են սույն Արձանագրությամբ՝ նրանց պարտավորությունների նկատմամբ:
3. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն վերապահում կատարած պետությունը կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել հիշյալ վերապահումը՝ այդ մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:
4. Սույն Արձանագրությանը միացած՝ Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից նրա 40-րդ հոդվածի 1 և 2-րդ կետերի հիման վրա կատարված հայտարարությունները կիրառելի են համարվում սույն Արձանագրության կապակցությամբ, եթե միանալու ժամանակ տվյալ մասնակից պետությունը հակառակի մասին ծանուցում չի հղում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Կոնվենցիայի 40-րդ հոդվածի 2 և 3-րդ կետերի և 44-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները *mutatis mutandis* կիրառելի են համարվում սույն Արձանագրության առնչությամբ

*Յոդված VIII. Ուժի մեջ մտնելը*

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում միանալու մասին վեցերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրը:
2. Միանալու մասին վեցերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո Արձանագրությունը միացող պետությունների համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթը հիշյալ պետության կողմից ի պահ հանձնելու օրը:

*Յոդված IX. Չեղյալ հայտարարումը*

1. Սույն Արձանագրությանը մասնակից ցանկացած պետություն կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:
2. Չեղյալ հայտարարումը տվյալ մասնակից պետության համար ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալուց մեկ տարի անց:

*Յոդված X. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի ծանուցումները*

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը V հոդվածում հիշատակված պետություններին տեղեկացնում է սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա, միանալու, վերապահումների, վերապահումները հետ վերցնելու և չեղյալ հայտարարելու, ինչպես նաև դրանց հետ կապված հայտարարությունների և ծանուցումների մասին:

*Յոդված XI. Ի պահ հանձնումը Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարության արխիվ*

Սույն Արձանագրության պատճենը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ստորագրված Գլխավոր ասամբլեայի Նախագահի և Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարության արխիվ: Գլխավոր քարտուղարը դրա վավերացված պատճենները փոխանցում է Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետություններին և V հոդվածում հիշատակված մյուս պետություններին: